բեմն յաւուրս փոխանորդութեան իւրոյ 'ի խնճոյս 'ի տուն Ճարտարապետին 'ի Լանկայ, թէ 'ի լինել այնպիսի շահաւէտ Ուսումնարանի՝ խոստացեալ էր ինքնին անձամբ կալ պաշտպան նմին, և չխնայել բնաւ ոչ 'ի տուրս դրամոց և ոչ 'ի քրտունս աշխատութեան. ահա ասեն, եհաս ժամանակ լինել այնմ, և նպաստաւորութեամբ ձերով կանգնել յոտին, եթէ կայ անշէջ 'ի սրտի քում բոց տենչանացն այնորիկ։ Եւ զկնի սուղ աւուրց սկիզբն արարին բանալ զհիմունս Ուսումնարանին յիւսկիւտար 'ի տեղին որ կոչէր վանք Երուսաղէմի ('ի 18 Սեպտեմբերի)։

Ի սմին ժամանակի Յովհաննէս վարդապետ Զմիւռնացի՝ որ վարէր զպաշտօն Փոխանորդութեան Երուսաղէմի 'ի Կոստանդինուպոլիս, անկեալ էր ընդ պարտեօք աւելի քան զ100,000 դահեկանի, զորոյ զտոկոսն վճարէր ամ ըստ ամէ. զայն տեսեալ Կիրակոս Եպիսկոպոսի՝ աղաչէր զՊողոս բառնալ զայն լուծ 'ի պարանոցէ նորին, զի ինչս մեծ էր այն Աթոռոյն, զի զի՞նչ օգուտ այնքան հոգ և աշխատութիւն 'ի վճարումն պարտուց, մինչդեռ աստ ասէ՝ արմատ ճգեալ ամէ և զօրանայ օր ըստ օրէ. և 'ի վերջոյ աղաչէ վճարել զպարտսն, թերեւս յետոյ բարւոք տնօրէնութիւն ինչ արասցեն Ամիրայք վասն կառավարութեան Փոխանորդարանին Երուսաղէմի։

Սուլթան Մահմուտ Արքայ՝ յորժամ ետ հրովարտակ Կաթոլիկ անուանեալ ժողովրդոց, գրեալ էր 'ի նմին Ասորւոց լինիլ հետեւակ Պապականաց. զայն լուեալ Կաթողիկոսին Ասորւոց՝ որ նստէր 'ի Տիգրանակերտ, գրեաց գիր աղաչանաց բազմակնիք առ Տէրութիւնն և առաքեաց 'ի Կոստանդինուպոլիս առ Պատրիարքն Հայոց, յորում յայտ առնէր թէ ինքեանք լեալ են կրօնակից և հետեւող ազգին Հայոց 'ի վաղ ժամանակաց, որպէս յայտնի տեսանի 'ի հրովարտակս Պատրիարքաց Երուսաղէմի, բայց Կաթոլիկք գոլով հակառակ ինքեանց՝ ստութեամբ խաբեալ են զԴուռն և առեալ հրովարտակ, զինիլ նովաւ ընդդէմ Ասորւոց և որպէս զժողովուրդն 'ի հնազանդութիւն Հռոմայ եկեղեցւոյն, և այս այպանելի ստութիւն յայտնի գոլով ամենեցուն՝ խնդրէր ջնջել զարձանագրութիւնս հրովարտակին այնմիկ՝ և շնորհել նոր հրաման ըստ առաջնոյն, և